# «Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններ

**Բովանդակություն**

**Էջ**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ....................................................................1

Զուտ ակտիվների մասին հաշվետվություն՝ առ 31 դեկտեմբերի 2019 թ. ....................................4

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն...5

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն ....................................................................................................6

Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն

1. Ֆոնդը ....................................................................................................7
2. Ֆոնդի տվյալները՝ վերջին երեք տարիների համար.................................................10
3. Ֆոնդի ակտիվների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ..................10
4. Զուտ ակտիվների արժեքի կազմը 2019 թ. դեկտեմբերի 31-ի և 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ .......................................................................................11

Deloitte.

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ.` +374 10 52 65 20
Ֆաքս` +374 10 52 75 20
www.deloitte.am

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»-ի մասնակիցներին`

### Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ» (այսուհետ` Ֆոնդի) կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են զուտ ակտիվների մասին հաշվետվությունը` առ 2019 թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆոնդի արդյունքների մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ֆոնդի զուտ ակտիվների մասին հաշվետվությունը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա Ֆոնդի արդյունքների և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունները` Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության` «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից` համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և մենք կատարել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները` համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան` մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար` անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ֆոնդը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «ԴելոյթԹուշԹոմացուԼիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2020 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների  վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր  բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ֆոնդի դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Աուդիտի գործընկեր

Ապրիլի 30, 2020 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

# «Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

## Զուտ ակտիվների մասին հաշվետվություն՝ առ 31 դեկտեմբերի 2019 թ.

| ՀՀ դրամով | 2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31 | | 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31 | |
|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Պարտատոմսեր | 43,714,969,250.23 | | 30,688,941,625.83 | |
| Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ | 34,889,986,096.47 | | 17,515,179,373.91 | |
| Դրամական միջոցներ | 254,650,186.45 | | 87,086,858.23 | |
| Ավանդներ | 40,080,000,000.00 | | 26,027,000,000.00 | |
| Հաշվեգրված տոկոս | 3,166,564,135.30 | 122,106,169,668.45 | 2,171,669,174.28 | 76,489,877,032.25 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **122,106,169,668.45** | | **76,489,877,032.25** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| Հաշվեգրումներ վճարների գծով | (118,508,996.15) | (118,508,996.15) | (80,744,707.19) | (80,744,707.19) |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **(118,508,996.15)** | | **(80,744,707.19)** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ** | | **121,987,660,672.30** | | **76,409,132,325.06** |

**Հաստատված է հրապարակման համար 2020 թ. ապրիլի 30 -ին:**

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

**Արման Վարդանյան**
Գլխավոր գործադիր տնօրեն

Ապրիլի 30, 2020 թ.
Երևան

**Իզաբելա Աղիլխանյան**
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

Ապրիլի 30, 2020 թ.
Երևան

# «Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

## 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն

| ՀՀ դրամով | 2019 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ՏԱՐԻ | | 2018 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ՏԱՐԻ | |
|---|---|---|---|---|
| **Ա) ՖՈՆԴԻ ԻՐԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ** | | | | |
| **Ֆոնդի սովորական արդյունք եկամուտ (առանց փակման գնի)** | | | | |
| Տոկոսային եկամուտ | 7,095,986,700.70 | 7,095,986,700.70 | 4,698,263,935.72 | 4,698,263,935.72 |
| **Ծախսեր** | | | | |
| Կառավարման վճար | (1,074,903,974.60) | | (671,117,006.96) | |
| Երաշխիքային ֆոնդի վճար | (19,634,721.39) | | (12,203,377.91) | |
| Աուդիտի վճար | (13,782,660.07) | | (11,805,172.56) | |
| Այլ վճարներ | (2,897,319.35) | (1,111,218,675.41) | (20,643,700.98) | (715,769,258.41) |
| **Սովորական ֆոնդի արդյունք** | | **5,984,768,025.29** | | **3,982,494,677.31** |
| **Իրացված փակման գին** | | | | |
| Իրացված օգուտ | 1,436,354,004.69 | | 663,156,211.47 | |
| Գործարքի միջնորդավճարներ | (1,036,565.79) | | (2,136,851.17) | |
| Արտարժութային տատանումների ազդեցություն բանկային հաշիվների վրա | (6,848,263.91) | 1,428,469,174.99 | (15,467,695.66) | 645,551,664.64 |
| **Իրացված փակման գին** | | **1,428,469,174.99** | | **645,551,664.64** |
| **Ֆոնդի իրացված արդյունք** | | **7,413,237,200.28** | | **4,628,046,341.95** |
| **Բ) ՉԻՐԱՑՎԱԾ ՓԱԿՄԱՆ ԳԻՆ** | | | | |
| **Չիրացված փակման գնի փոփոխություն** | 5,469,735,772.77 | **5,469,735,772.77** | (1,881,892,274.41) | **(1,881,892,274.41)** |
| **Գ) ԵԿԱՄՏԻ ՃՇԳՐՏՈՒՄ** | | | | |
| Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա ընթացքում եկամտի գծով | 0.00 | | 0.00 | |
| Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա ընթացքում նախկինում եկամտի գծով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| | | **0.00** | | **0.00** |
| **ՖՈՆԴԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | | **12,882,972,973.05** | | **2,746,154,067.54** |

**Հաստատված է հրապարակման համար 2020 թ. ապրիլի 30-ին:**

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

**Արման Վարդանյան**
Գլխավոր գործադիր տնօրեն

Ապրիլի 30, 2020 թ.
Երևան

**Իզաբելա Ադիլխանյան**
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

Ապրիլի 30, 2020 թ.
Երևան

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ C-QUADRAT Ampega Asset Management Armenia 02623817

## 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

| ՀՀ դրամով | | |
|---|---|---|
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (36,075,896 փայ՝ մեկ փայի դիմաց 1,408.7524 ՀՀ դրամ արժեքով)** | | **50,822,003,624.47** |
| **Բաշխում (0,00 ՀՀ դրամ x 0,00 փայ)** | | **0.00** |
| **Փայերի փոփոխություն** | | |
| Բաժանորդագրում (15,630,335 փայ) | | |
| Մարում (10,903 փայ) | 22,856,940,280.11 | |
| | (15,965,647.06) | |
| Համապատասխանաբար եկամտի ճշգրտում | 0.00 | **22,840,974,633.05** |
| **Տարվա Ֆոնդի արդյունք** | | **2,746,154,067.54** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (51,695,328 փայ՝ մեկ փայի դիմաց 1,478.0665 ՀՀ դրամ արժեքով)** | | **76,409,132,325.06** |
| **Բաշխում (0,00 ՀՀ դրամ x 0,00 փայ)** | | |
| **Փայերի փոփոխություն** | | |
| Բաժանորդագրում (20,801,751 փայ) | 32,739,392,731.91 | |
| Մարում (27,798 փայ) | (43,837,357.72) | |
| Համապատասխանաբար եկամտի ճշգրտում | 0.00 | **32,695,555,374.19** |
| **Տարվա Ֆոնդի արդյունք** | | **12,882,972,973.05** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (72,469,281 փայ՝ մեկ փայի դիմաց 1,683.3017 ՀՀ դրամ արժեքով)** | | **121,987,660,672.30** |

**Հաստատված է հրապարակման համար 2020 թ. ապրիլի 30 -ին:**

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

**Արման Վարդանյան**
Գլխավոր գործադիր տնօրեն

Ապրիլի 30, 2020 թ.
Երևան

**Իզաբելա Ադիլխանյան**
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

Ապրիլի **30**, 2020 թ.
Երևան

## 1. ՖՈՆԴԸ

«Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»-ն («Ֆոնդը») հիմնադրվել է 2014 թ. հունվարի 1-ին և սկսել է գործունեությունը 2014 թ. մարտի 11-ից: Ֆոնդի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37: Ֆոնդի կառավարիչն է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որն ավստրիական «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերության (C-QUADRAT Investment AG) (Վիեննա, Ավստրիա)(74,9%) և գերմանական «Տալանքս ասեթ մենեջմենթ» (Talanx Asset Management GmbH) (Քյոլն, Գերմանիա)(25,1%) ընկերության համատեղ ձեռնարկությունն է: «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերություն-ը (C-QUADRAT Investment AG) ակտիվների կառավարիչ է, որը մասնագիտացած է բացարձակ և ընդհանուր եկամտաբերության քանակական և հայեցողական ռազմավարություններում: Ընկերությունը հիմնադրվել է 1991 թվականին և 2006 թվականից այն ցուցակվում է Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսայի առաջնային հարթակում, իսկ 2008 թվականի մայիսից՝ նաև Վիեննայի ֆոնդային բորսայում: «Տալանքս ասեթ մենեջմենթ» (Talanx Asset Management) ընկերությունը՝ «Ամպեգա ինվեսթմենթ» (Ampega Investment) և «Տալանքս Իմմոբիլեն Մենեջմենթ» (Talanx Immobilien Management) ընկերությունների հետ համատեղ իրենցից ներկայացնում են Գերմանիայի մեծությամբ երրորդ ապահովագրական խմբի՝ «Տալանքս» (Talanx AG)-ի ֆինանսական ծառայությունների գծով սեգմենտը:

Ֆոնդը հանդիսանում է կենսաթոշակային ֆոնդ, որը կառավարվում է մասնագիտացված անկախ ակտիվների կառավարիչների կողմից, ովքեր կառավարում են մասնակիցների միջոցները՝ մինչև մասնակիցների կենսաթոշակային տարիքը լրանալը: Ֆոնդի ակտիվները հանդիսանում են Ֆոնդի մասնակիցների, այլ ոչ թե Ֆոնդի կառավարչի սեփականությունը: Ֆոնդն ունի Ֆոնդի ակտիվների կառավարման կանոններ և սահմանափակումներ: Ֆոնդի ակտիվները ներդրվում են Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում՝ արտարժութային ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը: Ֆոնդի նպատակն է ապահովել ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճը՝ ֆոնդի ակտիվների մինչև 25 տոկոսը ներդնելով բաժնային գործիքներում, բաժնային ֆոնդերում և բաժնային համարժեք գործիքներում, իսկ մնացածը՝ պարտատոմսերում, պարտատոմսերի ֆոնդերում, դրամային շուկայի գործիքներում, ավանդներում և այլ ակտիվներում: Թիրախային խումբ են հանդիսանում կենսաթոշակային խնայողություն իրականացնողները՝ ռիսկի միջին հակվածությամբ:

Ֆոնդը թողարկում է միայն մեկ դասի փայեր: Փայերը գրանցվում են կենսաթոշակային ֆոնդի հաշվին, որը կառավարվում է մասնակիցների էլեկտրոնային ռեեստրի միջոցով: Փայերը դրանց տնօրինողներին իրավունք չեն վերապահում կայացնել որոշումներ Ֆոնդի վերաբերյալ: Ֆոնդը կարող է դադարեցվել Կառավարչի կամ Պահառուի կողմից՝ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և միմիայն ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») խորհրդի համաձայնության առկայության դեպքում:

### Ընդհանուր տեղեկություններ

| | |
|---|---|
| *Ֆոնդի կառավարիչ* | «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| | Գրանցման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37 |
| | Գրանցման ամսաթիվ՝ 29 նոյեմբերի 2013 թ. |
| | Կառավարվող այլ ֆոնդեր՝ |
| | «Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ – Պ» |
| | «Ցե-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ – Պ» |
| | «Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդ |
| | Բաժնետիրական կառուցվածք՝ |
| | 74,9 % «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերություն, 25,1% «Տալանքս ասեթ մենեջմենթ» |
| | Ընկերության ղեկավարությունը՝ |
| | Արման Վարդանյան (Գլխավոր գործադիր տնօրեն) |
| | Իզաբելա Ադիլխանյան (Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն) |
| | Ամբողջությամբ վճարված կապիտալ՝ 650,000 հազար ՀՀ դրամ |
| *Դիտորդ խորհուրդ* | Էռնստ-Լյուդվիգ Դրայս (Խորհրդի նախագահ) |
| | Անդրեաս Վիմմեր |

| | |
|---|---|
| *Ֆոնդի ակտիվների պահառու* | Յոհաննես Կերխեր<br>Կրիստոբալ Մենդեզ դե Վիգո<br>«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն (մասնակիցների և արժեթղթերի պահառու և ռեեստրավար) գրանցման և գլխամասային գրասենյակի հասցեն՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ |
| *Ֆոնդի բանկ* | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (դրամական միջոցներ), գրանցման և գլխամասային գրասենյակի հասցեն՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Տերյան 66 |
| *Ֆոնդի ՉԱԱ հաշվարկն իրականացնող* | «Ռայֆազն Բանկ Ինթերնեյշնլ ԱԳ» |
| *Աուդիտոր* | «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ |

Պորտֆելի հաշվառման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային արտահայտությամբ ներկայացված դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների նկատմամբ հաշվարկված տոկոսային դրույք հաշվետու ամսաթվի դրությամբ (%):

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան: Հաշվետվություններում ներկայացված հաշվետու ժամանակաշրջանը 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանն է:

**Փայերի թողարկում և մարում.** Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է ՀՀ դրամով և իրենից ներկայացնում է ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքի և ֆոնդի ընդհանուր պարտավորությունների տարբերությունը: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, ինչպես նաև փայի հաշվարկային արժեքը և մարման ու թողարկման գները հաշվարկվում են յուրաքանչյուր աշխատանքային օր և հրապարակվում Կառավարչի պաշտոնական կայքէջում: Ֆոնդի փայերի թողարկումը և մարումը կատարվում է Կառավարչի կայքում թողարկման կամ մարման օրվա դրությամբ զուտ ակտիվների արժեքի վերաբերյալ հասանելի ամենավերջին տեղեկատվության հիման վրա: Փայերի թողարկման համար վճար կամ միջնորդավճար չի գանձվում: Մարման վճարները կատարում է դիմողը, և այդ վճարները տատանվում են 0%-ից 2%-ի միջակայքում՝ կախված մարման գործարքի տեսակից (կանխիկ/ոչ կանխիկ և այլն) և սահմանվում են Ֆոնդի կանոններով և ՀՀ կիրառելի օրենսդրությամբ:

**Պահառուական և Ֆոնդի բանկի վճարներ.** Ֆոնդի բանկի կողմից միջնորդավճարներ չեն գանձվում: Պահառուի կողմից գանձվող տարեկան վճարները կազմում են միջին զուտ ակտիվների 0.15% հաշվարկված օրական կտրվածքով: Պահառուական վճարները ստանձնում է Ֆոնդի կառավարիչը:

**Ֆոնդի կանոնները.** Ֆոնդի կանոնները, պարբերական հաշվետվությունները, փայերի թողարկման և մարման վերաբերյալ տեղեկությունները և կանոնները, Ֆոնդի ներդրումային նպատակները և ներդրումային քաղաքականությունը, ինչպես նաև այլ տեղեկությունները զետեղված և հասանելի են Ֆոնդի մենեջերի պաշտոնական կայքէջում՝ https://www.c-quadrat-ampega.am: Փայատերերը քվեարկման իրավունք չունեն: Ֆոնդի փայերը որևէ արժեթղթային բորսայում ցուցակված չեն:

**Ֆինանսական գործիքների գնահատման կանոնները.** արժեթղթերը զուտ ակտիվների մասին հաշվետվությունում ներկայացվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ներկա արժեքով, որն իրենից ներկայացնում է վերջին հասանելի շուկայական արժեքը, կամ շուկայի բացակայության դեպքում՝ արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Արժեթղթերի ներկա արժեքի՝ որոշված վերը նշված եղանակով, և նրանց սկզբնական միջին կշռված արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է հաշվետվություններում որպես չիրացված փակման գնի փոփոխություն: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առքուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են համաձայն վերը նշված եղանակի և այնուհետև փոխարկվում են պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ գործող փոխարժեքով:

**Ավանդներ**. ավանդները գնահատվում են գծային մեթոդով:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են շուկայի փակման դրությամբ վերջին հասանելի գործող գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների կողմից ծանուցված փակման գներով: ՀՀ գանձապետական պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր օրվա համար հրապարակված շուկայական դրույքաչափերը:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները, հաշվի առնելով վերջին էական գործարքներում օգտագործված գները:

ՀՀ գանձապետական պարտատոմսերը գնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ամենօրյա կտրվածքով հրապարակվող շուկայական դրույքաչափով:

**Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS).** UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների վերջին գնանշված արժեքով:

ՀՀ պետական պարտատոմսերը գնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ամենօրյա կտրվածքով հրապարակվող եկամտաբերության կորի հիման վրա:

**Հարկում.** Ֆոնդի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն, Ֆոնդի շահույթը, եկամուտները կամ կապիտալի հավելաճից օգուտները ենթակա չեն հարկման:

**Կառավարման վճարներ.** կառավարման վճարները հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա և ճանաչվում են Ֆոնդի իրացված արդյունքում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ աուդիտի վճարը և Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի վճարը: Կառավարման վճարները չեն ներառում գործարքի հետ կապված ծախսերը: Կառավարման տարեկան վճարը հաշվարկվում է օրական 1.1%-ի չափով, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը և ենթակա է վճարման մինչև հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը:.

**Բաշխումներ մասնակիցներին.** Ֆոնդի եկամուտը չի բաշխվելու մասնակիցներին, այլ վերստին ներդրվելու է Ֆոնդում: Մասնակիցները կարող են ստանալ Ֆոնդի եկամտի իրենց մասնաբաժինը միմիայն փայերի մարման միջոցով:

**Կառավարչի կողմից վճարվող վարձատրության քաղաքականությունը.** 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա ընթացքում Կառավարչի կողմից իր աշխատակիցներին վճարված աշխատավարձերի ընդհանուր գումարը կազմում է 164,170 հազար ՀՀ դրամ (2018 թ.՝ 124,411 հազար ՀՀ դրամ), որից 110,727 հազար ՀՀ դրամը (2018 թ.՝ 80,678 հազար ՀՀ դրամը) ներկայացնում է առանցքային ղեկավարության վարձատրությունը: Ֆոնդը աշխատակիցներ չունի: Ֆոնդի կողմից որևէ ուղղակի վճարում աշխատավարձերի գծով չի կատարվում: Կառավարչի կողմից հաշվարկվող վարձատրությունը հիմնված է աշխատավարձերի՝ հաստատագրված դրույքաչափերով քաղաքականության վրա և ուղղակիորեն կախված չէ Ֆոնդի արդյունքներից: Հաշվետու ժամանակաշրջանում Կառավարչի՝ վարձատրությանն առնչվող քաղաքականության էական փոփոխություններ չեն արձանագրվել:

**Կորոնավիրուսային հիվանդություն.** 2020թ. սկզբին նոր Կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկված պատասխան քայլերը՝ ուղղված հիվանդության տարածման կանխմանը, հանգեցնում են տնտեսական վնասների և

նշանակալի ազդեցություն ունեն համաշխարհային ֆինանսական շուկաների վրա, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ նաև Ֆոնդի կատարողականի վրա:

## 2. ՖՈՆԴԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ՝ ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

| Ամսաթիվը | Արժույթը | Ակտիվների զուտ արժեքը ԸՆԴԱՄԵՆԸ | Ակտիվների զուտ արժեքը ՄԵԿ ՓԱՅԻ ԴԻՄԱՑ | Բաշխումը ԸՆԴԱՄԵՆԸ | Բաշխումը ՇՄՏ ՓԱՅԻ |
|---|---|---|---|---|---|
| 31 դեկտեմբերի 2019 թ. | ՀՀ ԴՐԱՄ | 121,987,660,672.30 | 1,683.3017 | 0 | 0 |
| 31 դեկտեմբերի 2018 թ. | ՀՀ ԴՐԱՄ | 76,409,132,325.06 | 1,478.0665 | 0 | 0 |
| 31 դեկտեմբերի 2017թ. | ՀՀ ԴՐԱՄ | 50,822,003,624.47 | 1,408.7524 | 0 | 0 |

## 3. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի, 2014 թ. | 1,026.4490 |
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի, 2015 թ. | 1,098.3272 |
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի, 2016 թ. | 1,236.6050 |
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի, 2017 թ. | 1,408.7524 |
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի, 2018 թ. | 1,478.0665 |
| Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով 2018 թ. հունվարի 1-ից 2018 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում | 69.3141 |
| **Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %** | **4.92%** |
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով՝ ֆինանսական տարվա վերջի դրությամբ, ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի, 2019 թ. | 1,683.3017 |
| Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով 2019 թ. հունվարի 1-ից 2019 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում | 205.2352 |
| **Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %** | **13.89%** |
| **Մեկ փայի դիմաց զուտ եկամուտը՝ ՀՀ դրամով, սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից** | **683.3017** |
| **Փայի մեկ միավորի կատարողականը սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից տոկոսային արտահայտությամբ, %** | **68.33%** |

## 4. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԿԱԶՄԸ 2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

| ISIN | Անվանումը* | Արժույթը | Քանակ | Ձեռքբերված քանակ | Վաճառված քանակ | Շուկայական արժեքը արժույթով (կլորացված) | Շուկայական արժեք ՀՀ դրամով | % զուտ ակտիվ-ների նկատ-մամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | | | | | | | | |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMGB10172212 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 11/21 | ՀՀ ԴՐԱՄ | 750,000,000 | - | - | 110.90 | 831,718,566.75 | 0.68% |
| AMGB20172327 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 12/32 | ՀՀ ԴՐԱՄ | 3,130,148,000 | 460,000,000 | - | 137.07 | 4,290,348,217.81 | 3.52% |
| AMGB1029A235 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 13/23 | ՀՀ ԴՐԱՄ | 1,800,000,000 | - | - | 112.13 | 2,018,252,496.60 | 1.65% |
| AMGN60294201 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/20 | ՀՀ ԴՐԱՄ | 275,000,000 | - | (725,000,000) | 103.07 | 283,441,003.45 | 0.23% |
| AMGB1029A250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25 | ՀՀ ԴՐԱՄ | 3,405,000,000 | - | - | 118.78 | 4,044,496,969.16 | 3.32% |
| AMGN60294219 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/21 | ՀՀ ԴՐԱՄ | 280,000,000 | - | (720,000,000) | 106.67 | 298,670,616.16 | 0.24% |
| AMGB2029A366 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/36 | ՀՀ ԴՐԱՄ | 4,130,000,000 | 600,000,000 | - | 134.45 | 5,552,859,942.98 | 4.55% |
| AMGB1029A276 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/27 | ՀՀ ԴՐԱՄ | 2,980,000,000 | 800,000,000 | - | 114.01 | 3,397,553,892.88 | 2.79% |
| AMGB20072287 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 08/28 | ՀՀ ԴՐԱՄ | 250,000,000.00 | - | - | 122.46 | 306,153,784.75 | 0.25% |
| AMGB30163472 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/47 | ՀՀ ԴՐԱՄ | 3,840,000,000 | 3,640,000,000 | - | 132.28 | 5,079,514,126.08 | 4.16% |
| AMGN60294243 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/24 | ՀՀ ԴՐԱՄ | 1,200,000,000 | 1,200,000,000 | - | 105.06 | 1,260,755,395.20 | 1.03% |
| AMGB1029A292 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29 | ՀՀ ԴՐԱՄ | 3,800,000,000 | 3,800,000,000 | - | 105.99 | 4,027,799,242.20 | 3.30% |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMACBAB24ER4 | ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ 18/20 | ՀՀ ԴՐԱՄ | 1,500 | - | - | 104,804.65 | 157,206,980.25 | 0.13% |
| AMAMRBB2DER0 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 6,100 | - | - | 104,505.25 | 637,482,031.10 | 0.52% |
| AMAMRBB2EER8 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 18/22 | ՀՀ ԴՐԱՄ | 10,000 | - | - | 103,230.20 | 1,032,302,045.00 | 0.85% |
| AMHEZBB27ER5 | Հայէկոնոմբանկ 19/22 | ՀՀ ԴՐԱՄ | 40,000 | 40,000 | - | 10,215.50 | 408,620,000.00 | 0.33% |
| AMSWISB23ER3 | Արմսվիսբանկ ՓԲԸ 15/20 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 400 | - | - | 1,036.01 | 198,789,809.95 | 0.16% |
| AMSWISB26ER6 | Արմսվիսբանկ ՓԲԸ 17/21 | ՀՀ ԴՐԱՄ | 980 | - | - | 52,698.06 | 51,644,096.25 | 0.04% |
| AMSWISB25ER8 | Արմսվիսբանկ ՓԲԸ 17/23 | ԵՎՐՈ | 14,945 | - | - | 106.98 | 859,006,033.28 | 0.70% |
| AMSWISB27ER4 | Արմսվիսբանկ ՓԲԸ 18/23 | ՀՀ ԴՐԱՄ | 28,600 | 21,800 | - | 52,968.00 | 1,514,884,779.98 | 1.24% |
| AMSWISB2AER6 | Արմսվիսբանկ ՓԲԸ 19/25 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 8,000 | 8,000 | - | 104.13 | 399,599,694.16 | 0.33% |
| AMCOVSB25ER2 | Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 5,000 | - | - | 101,662.50 | 508,312,500.00 | 0.42% |
| AMCOVSB27ER8 | Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 18/21 | ԵՎՐՈ | 14,000 | - | - | 102.14 | 768,288,891.83 | 0.63% |
| AMFNCAB23ER0 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 50,000 | - | - | 10,163.05 | 508,152,462.50 | 0.42% |
| AMFNCAB24ER8 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 19/22 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 15,000 | 15,000 | - | 26.09 | 187,711,167.23 | 0.15% |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| AMFNCAB25ER5 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 19/22 | ՀՀ ԴՐԱՄ | 40,000 | 40,000 | - | 10,234.17 | 409,366,892.00 | 0.34% |
| AMFNCAB26ER3 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 19/22 | ՀՀ ԴՐԱՄ | 30,000 | 30,000 | - | 10,335.07 | 310,052,157.00 | 0.25% |
| AMGLBLB25ER6 | Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ կորպ. պարտատոմս 17/20 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,821 | - | - | 102.17 | 89,247,846.25 | 0.07% |
| AMGLBLB27ER2 | Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ կորպ. պարտատոմս 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 15,000 | - | - | 10,145.75 | 152,186,250.00 | 0.12% |
| AMGLBLB28ER0 | Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ կորպ. պարտատոմս 19/21 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,100 | 1,100 | - | 100.62 | 53,095,474.60 | 0.04% |
| AMINECB22ER8 | ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ 18/21 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2,000 | - | - | 100.30 | 96,231,849.52 | 0.08% |
| AMINECB24ER4 | ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 55,000 | - | - | 10,192.00 | 560,560,027.50 | 0.46% |
| AMINECB26ER9 | ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ 19/22 | ՀՀ ԴՐԱՄ | 30,000 | 30,000 | - | 10,295.00 | 308,850,000.00 | 0.25% |
| AMNMCCB2IER0 | Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 15,000 | - | - | 10,454.24 | 156,813,531.00 | 0.13% |
| AMUCOMB21ER6 | Յուքոմ 19/22 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 9,022 | 9,022 | - | 101.33 | 438,523,641.00 | 0.37% |
| AMZPXKB21ER2 | Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ 19/22 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 40,000 | 40,000 | - | 103.97 | 1,994,976,360.81 | 1.65% |
| AMZPXKB22ER0 | Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ 19/22 | ՀՀ ԴՐԱՄ | 5,000 | 5,000 | - | 104,300.10 | 521,500,475.00 | 0.43% |
| **Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության պարտատոմսեր** | | | | | | | **43,714,969,250.23** | **35.83%** |
| **Օտարերկրյա ներդրումներ** | | | | | | | | |
| **Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | | |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| LU0776122383 | BGF-ASIAN TIG.BD D2 USD | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 401,500 | 525 | - | 14.58 | 2,808,101,440.14 | 2.30% |
| IE00B1FZS798 | ISHSII-DLT.BD7-10YR DLDIS | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 50,850 | 640 | (330.00) | 202.99 | 4,951,483,309.56 | 4.06% |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| AT0000A12G92 | C-QUADR.GR.ST.ESG(VTA) | ԵՎՐՈ | 642,697 | 1,590 | - | 15.68 | 5,414,229,444.11 | 4.44% |
| IE00B5BMR087 | ISHSVII-CORE S+P500 DLACC | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 26,620 | 67 | - | 320.30 | 4,090,107,365.86 | 3.35% |
| IE00BJ0KDQ92 | X(IE)-MSCI WORLD 1C | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 172,200 | 550 | - | 68.94 | 5,694,743,201.91 | 4.67% |
| LU0326423067 | BGF - WORLD GOLD D2 EO H | ԵՎՐՈ | 627,000 | - | - | 5.54 | 1,866,215,590.80 | 1.53% |
| LU0360482987 | MSI-GLOBAL BRANDS Z DL | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 125,550 | 1,170 | - | 79.01 | 4,758,482,730.28 | 3.90% |
| LU0839027447 | XTR.NIKKEI 225 1D | ԵՎՐՈ | 80,000 | 1,300 | - | 20.10 | 863,699,176.00 | 0.71% |
| LU1184092051 | XTR.MSCI EUROPE 2CDLH | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 190,000 | - | - | 11.55 | 1,052,883,936.43 | 0.86% |

## «Յե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

### Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն (շարունակ.)

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| LU1321847714 | BLACK.SF-EM.MK.EQ.ST.D2DL | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 37,000 | 125 | - | 191.00 | 3,390,039,901.38 | 2.78% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **34,889,986,096.47** | **28.60%** |
| **Դրամական միջոցներ** | | **ՀՀ ԴՐԱՄ** | | | | | **254,650,186.45** | **0.21%** |
| **Ավանդներ ՀՀ բանկերում** | | **ՀՀ ԴՐԱՄ** | | | | | **40,080,000,000.00** | **32.86%** |
| **Հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | | | | | | |
| Տոկոսի հաշվեգրումներ | | ՀՀ ԴՐԱՄ | | | | | 3,166,564,135.30 | 2.60% |
| Վճարների հաշվեգրումներ | | ՀՀ ԴՐԱՄ | | | | | (118,508,996.15) | (0.10%) |
| **Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | | | | | **3,048,055,139.15** | **2.50%** |
| **Ընդամենը զուտ ակտիվների արժեքը** | | | | | | | **121,987,660,672.30** | **100.00%** |
| **Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով** | | | | | | **ՀՀ ԴՐԱՄ** | **1,683.30** | |
| **Չմարված փայեր** | | | | | | **Փայ** | **72,469,281** | |

*Արժեթղթի անվանումից հետո առաջին թիվը թողարկման տարին է, իսկ երկրորդ թիվը՝ մարման տարին:

## «Յե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

### Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն (շարունակ.)

### Զուտ ակտիվների արժեքի կազմը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| ISIN | Անվանումը* | Արժույթը | Քանակ | Ձեռքբերված քանակ | Վաճառված քանակ | Շուկայական արժեքը արժույթով (կլորացված) | Շուկայական արժեք ՀՀ դրամով | % զուտ ակտիվների նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | | | | | | | | |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMGB10172212 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 11/21 | ՀՀ ԴՐԱՄ | 750,000,000 | - | - | 113.56 | 851,724,076.50 | 1.11% |
| AMGB1029A235 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 13/23 | ՀՀ ԴՐԱՄ | 1,800,000,000 | - | - | 107.79 | 1,940,209,408.80 | 2.54% |
| AMGB1029A250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25 | ՀՀ ԴՐԱՄ | 3,405,000,000 | - | - | 112.02 | 3,814,324,420.56 | 4.99% |
| AMGB1029A276 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/27 | ՀՀ ԴՐԱՄ | 2,180,000,000 | 2,180,000,000 | - | 105.32 | 2,295,911,121.02 | 3.00% |
| AMGB20072287 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 08/28 | ՀՀ ԴՐԱՄ | 250,000,000 | - | - | 113.70 | 284,257,654.50 | 0.37% |
| AMGB20172327 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 12/32 | ՀՀ ԴՐԱՄ | 2,670,148,000 | 670,148,000 | - | 127.11 | 3,394,017,785.23 | 4.44% |
| AMGB2029A366 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/36 | ՀՀ ԴՐԱՄ | 3,530,000,000 | 1,200,000,000 | - | 124.19 | 4,384,056,926.16 | 5.74% |
| AMGB30163472 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/47 | ՀՀ ԴՐԱՄ | 200,000,000 | - | - | 124.57 | 249,145,592.60 | 0.33% |
| AMGN36294194 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/19 | ՀՀ ԴՐԱՄ | 1,200,000,000 | - | - | 102.40 | 1,228,853,041.20 | 1.61% |
| AMGN60294193 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 13/16 | ՀՀ ԴՐԱՄ | 327,500,000 | - | - | 101.91 | 333,769,813.27 | 0.44% |
| AMGN60294201 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/20 | ՀՀ ԴՐԱՄ | 1,000,000,000 | - | - | 105.63 | 1,056,313,307.00 | 1.38% |
| AMGN60294219 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/21 | ՀՀ ԴՐԱՄ | 1,000,000,000 | - | - | 107.22 | 1,072,191,053.00 | 1.40% |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMACBAB22ER8 | ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ 17/19 | ՀՀ ԴՐԱՄ | 2,000.000 | - | - | 100,431.93 | 200,863,860.00 | 0.26% |
| AMACBAB24ER4 | ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ 18/20 | ՀՀ ԴՐԱՄ | 1,500.000 | 1,500.000 | - | 104,354.47 | 156,531,699.00 | 0.20% |
| AMAMRBB23ER9 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 16/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 5,000.000 | - | - | 100.95 | 244,172,812.51 | 0.32% |
| AMAMRBB24ER7 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 17/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 3,000.000 | - | - | 101.00 | 146,577,991.50 | 0.19% |
| AMAMRBB2DER0 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 6,100.000 | 6,100.000 | - | 103,157.09 | 629,258,218.50 | 0.82% |
| AMAMRBB2EER8 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 18/22 | ՀՀ ԴՐԱՄ | 10,000.000 | 10,000.000 | - | 102,012.37 | 1,020,123,675.00 | 1.34% |
| AMANLBB22ER2 | ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ 17/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 3,000.000 | - | - | 102.41 | 148,622,077.13 | 0.19% |
| AMANLBB23ER0 | ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ 17/19 | ՀՀ ԴՐԱՄ | 6,000.000 | - | - | 52,179.17 | 313,075,038.00 | 0.41% |
| AMARBKB2BER6 | ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ԲԲԸ 16/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 500.000 | - | - | 25.32 | 6,124,383.84 | 0.01% |
| AMARBKB2GER5 | ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ԲԲԸ 17/19 | ՀՀ ԴՐԱՄ | 40,000.000 | - | - | 10,128.15 | 405,126,000.00 | 0.53% |
| AMCOVSB22ER9 | Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 17/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 5,000.000 | - | - | 101.18 | 244,739,162.82 | 0.32% |
| AMCOVSB23ER7 | Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 17/19 | ՀՀ ԴՐԱՄ | 3,780.000 | - | - | 105,300.95 | 398,037,591.00 | 0.52% |
| AMCOVSB24ER5 | Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 17/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2,000.000 | - | - | 101.28 | 97,987,287.38 | 0.13% |
| AMCOVSB25ER2 | Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 5,000.000 | 5,000.000 | - | 101,517.67 | 507,588,325.00 | 0.66% |
| AMCOVSB27ER8 | Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 18/21 | ԵՎՐՈ | 14,000.000 | 14,000.000 | - | 100.22 | 776,793,538.92 | 1.02% |
| AMFMGCB22ER1 | Առաջին Հիպոթեքային ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ 17/19 | ՀՀ ԴՐԱՄ | 2,499.000 | - | - | 10,162.98 | 25,397,298.64 | 0.03% |
| AMFNCAB21ER4 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 17/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 30,492.000 | - | - | 25.80 | 380,623,506.08 | 0.50% |
| AMFNCAB22ER2 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 17/19 | ՀՀ ԴՐԱՄ | 19,000.000 | - | - | 10,381.86 | 197,255,332.40 | 0.26% |

## «Յե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

### Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն (շարունակ.)

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| AMFNCAB23ER0 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 50,000.000 | 50,000.000 | - | 10,034.92 | 501,745,800.00 | 0.66% |
| AMHEZBB22ER6 | Հայէկոնոմբանկ 17/19 | ՀՀ ԴՐԱՄ | 4,000.000 | - | - | 10,604.54 | 42,418,140.00 | 0.06% |
| AMHEZBB23ER4 | Հայէկոնոմբանկ 17/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2,000.000 | - | - | 102.29 | 98,963,349.75 | 0.13% |
| AMINECB22ER8 | ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ 18/21 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2,000.000 | 2,000.000 | - | 100.07 | 96,820,530.75 | 0.13% |
| AMINECB24ER4 | ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 55,000.000 | 55,000.000 | - | 10,113.70 | 556,253,500.00 | 0.73% |
| AMNMCCB2BER5 | Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 14/19 | ՀՀ ԴՐԱՄ | 1,000.000 | - | - | 10,271.50 | 10,271,500.00 | 0.01% |
| AMNMCCB2GER4 | Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 16/19 | ՀՀ ԴՐԱՄ | 20,000.000 | - | - | 10,400.00 | 208,000,000.00 | 0.27% |
| AMNMCCB2HER2 | Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 16/19 | ՀՀ ԴՐԱՄ | 6,100.000 | - | - | 10,364.00 | 63,220,400.00 | 0.08% |
| AMNMCCB2IER0 | Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 15,000.000 | 15,000.000 | - | 10,486.83 | 157,302,419.25 | 0.21% |
| AMSWISB22ER5 | Արմսվիսբանկ ՓԲԸ 15/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 150.000 | - | - | 1,028.16 | 74,606,175.65 | 0.10% |
| AMSWISB23ER3 | Արմսվիսբանկ ՓԲԸ 15/20 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 400.000 | - | - | 1,063.73 | 205,831,126.13 | 0.27% |
| AMSWISB25ER8 | Արմսվիսբանկ ՓԲԸ 17/23 | ԵՎՐՈ | 14,945.000 | - | - | 102.59 | 848,825,194.29 | 1.11% |
| AMSWISB26ER6 | Արմսվիսբանկ ՓԲԸ 17/21 | ՀՀ ԴՐԱՄ | 980.000 | - | - | 53,533.48 | 52,462,806.09 | 0.07% |
| AMSWISB27ER4 | Արմսվիսբանկ ՓԲԸ 18/23 | ՀՀ ԴՐԱՄ | 6,800.000 | 6,800.000 | - | 52,756.45 | 358,743,871.22 | 0.47% |
| XS1117287638 | Դիլիջան ֆին.15/20MTN REGS | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 500,000.000 | - | - | 101.00 | 244,293,750.01 | 0.32% |
| AMGLBLB23ER1 | Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ կորպ. պարտատոմս 16/19 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2,500.000 | - | - | 103.49 | 125,155,437.19 | 0.16% |
| AMGLBLB25ER6 | Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ կորպ. պարտատոմս 17/20 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,821.000 | - | - | 101.52 | 89,425,627.94 | 0.12% |
| AMGLBLB27ER2 | Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ կորպ. պարտատոմս 18/21 | ՀՀ ԴՐԱՄ | 15,000.000 | 15,000.000 | - | 10,062.00 | 150,930,000.00 | 0.20% |
| **Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության պարտատոմսեր** | | | | | | | **30,688,941,625.83** | **40.16%** |

**Օտարերկրյա ներդրումներ**

**Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)**

**Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| LU0776122383 | BGF-ASIAN TIG.BD D2 USD | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 197,500.000 | - | - | 13.03 | 1,244,894,343.78 | 1.63% |
| IE00BSKRJZ44 | ISHSIV-DL T.BD20+YR DL D | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,358,000.000 | 795,000.000 | - | 4.51 | 2,961,123,243.83 | 3.88% |

**Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| AT0000A12G92 | C-QUADR.GR.ST.ESG(VTA) | ԵՎՐՈ | 377,696.730 | 377,696.730 | - | 11.99 | 2,507,250,416.83 | 3.28% |
| DE000A0NGJ44 | C-QUAD.ASIAN CONSUMER IT | ԵՎՐՈ | 8,050.000 | - | - | 104.33 | 464,986,551.23 | 0.61% |
| IE00B0M62Q58 | ISHS-MSCI WORLD DL D | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 95,000.000 | - | - | 39.77 | 1,827,680,062.55 | 2.39% |
| IE00B5BMR087 | ISHSVII-CORE S+P500 DLACC | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 19,600.000 | 19,600.000 | - | 243.34 | 2,307,228,210.06 | 3.02% |
| IE00BJ0KDQ92 | X(IE)-MSCI WORLD 1C | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 79,200.000 | - | - | 53.81 | 2,061,622,530.06 | 2.70% |
| LU0326423067 | BGF - WORLD GOLD D2 EO H | ԵՎՐՈ | 627,000.000 | 350,000.000 | - | 4.26 | 1,478,810,223.00 | 1.94% |
| LU1184092051 | XTR.MSCI EUROPE 2CDLH | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 190,000.000 | 190,000.000 | - | 9.07 | 833,324,681.27 | 1.09% |

## «Յե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

### Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն (շարունակ.)

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| LU1321847714 | BLACK.SF-EM.MK.EQ.ST.D2DL | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 24,700.000 | 16,200.000 | - | 153.01 | 1,828,259,111.30 | 2.39% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **17,515,179,373.91** | **22.92%** |
| | | | | | | | | |
| **Դրամական միջոցներ** | | **ՀՀ ԴՐԱՄ** | | | | | **87,086,858.23** | **0.11%** |
| **Ավանդներ ՀՀ բանկերում** | | **ՀՀ ԴՐԱՄ** | | | | | **26,027,000,000.00** | **34.06%** |
| **Հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | | | | | | |
| Տոկոսի հաշվեգրումներ | | ՀՀ ԴՐԱՄ | | | | | 2,171,669,174.28 | 2.84% |
| Վճարների հաշվեգրումներ | | ՀՀ ԴՐԱՄ | | | | | (80,744,707.19) | (0.11%) |
| **Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | | | | | **2,090,924,467.09** | **2.74%** |
| | | | | | | | | |
| **Ընդամենը զուտ ակտիվների արժեքը** | | | | | | | **76,409,132,325.06** | **100%** |
| **Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով** | | | | | | **ՀՀ ԴՐԱՄ** | **1,478.07** | |
| **Չմարված փայեր** | | | | | | **Փայ** | **51,695,328** | |

*Արժեթղթի անվանումից հետո առաջին թիվը թողարկման տարին է, իսկ երկրորդ թիվը՝ մարման տարին: